ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան
(կնքման վայրը)

«03» 08 2022թ.

*«08» հունվարի 2018 թվականին կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման թիվ ԿՊ0046 պայմանագրի (այսուհետ՝ **«Պայմանագիր»**) կողմերը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ **«Մատակարար»**), ի դեմս գլխավոր տնօրեն Կ.Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ **«Սպառող»**), ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Աղաբաբյանի, ով գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով **«Կողմեր»**, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ **«Կողմ»**, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.*

1. *Պայմանագրի 6-րդ հավելվածին կից ցանկում («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ բաժանորդներ Միասնական սոցիալական ծառայության ստորաբաժանումներ) ավելացնել ստորև նշված բաժանորդին.*

h/h	ID	Քարտի համարը	Բաժանորդի անվանումը	Մասնաճյուղի (էլ. ցանցի) անվանումը
1	123160005	0519132	ՄՄԾ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ	Դեբեդ մ/ճ «Ստեփանավան» էլ.ցանց

2. *Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մասով կիրառվում է 2022 թվականի հուլիսի 1-ից, Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:*
3. *Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:*
4. *Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:*

Կողմերի հասցեներն ու ստորագրությունները

Մատակարար՝
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գտնվելու վայրը՝
ք. Երևան, Ա. Արմենակյան 127

Լիազորված անձ՝

Դ. Ղազինյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.

Սպառող՝
Միասնական սոցիալական ծառայություն

Գտնվելու վայրը՝
ք. Երևան, Նալբանդյան 13

Գլխավոր քարտուղար՝

Ա. Աղաբաբյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ. Տ.